ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 311 – Ա

«ՈՒՅԾԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԼՈՒՍԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ և 163-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Ույծի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վ. Ղազարյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Ույծի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վլադիմիր Ղազարյանին 2026 թվականի հուլիսի 1-ից 10-ը ներառյալ տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 8 աշխատանքային օր:

2. Վարչատնտեսական մասի համակարգողի արձակուրդում գտնվելու ընթացքում նրա պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Լուսինե Պողոսյանին:

3. Վլադիմիր Ղազարյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հուլիսի 13-ից:

2026-06-30 18:11:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. հունիսի 30
Ք. Կապան